

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
«ՌՌՌ» ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

«Հաստատում եմ»

«ՌՌՌ» հանքային ջրերի գործարան ՓԲԸ  
գործադիր տնօրեն Ժ. Սարգսյան

---

«30» նոյեմբեր 2020թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲԶՆԻՒ ԱԾԽԱԹԹՎԱՅԻՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ  
ԹԻՎ 1/67 (2-ԷԿ կրկնորդ) ԵՎ 8/69 ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻՑ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ  
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՌՌՌ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՇՇԱԼՑՄԱՆ  
ԳՈՐԾԱՐԱՆԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ


ք. Երևան  
2020թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ -----	4
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----	6
1.1. Նախատեսվող գործունեության համառոտ նկարագրությունը -----	6
1.2. Նախագծմամբ նորմատիվ-իրավական հենքը -----	9
2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ -----	13
3. ՇՐՋԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ -----	19
4. ՌՌՌ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՇՇԱԼՑՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ /ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ/-----	33
4.1 Հոսքագծերի տեխնոլոգիական նկարագրերը-----	36
4.2 ՌՌՌ հանքային ջրերի գործարանի ջրամատակարարման և ջրահեռացման բնութագիրը-----	38
4.3 Առաջացող թափոնների բնութագիրը-----	39
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ -----	43
6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ -----	46
6.1. Ընդհանուր բնույթի միջոցառումներ -----	46
6.2. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիր -----	47
6.3. Հիդրոերկրաբանական մշտադիտարկումների (մոնիտորինգի) իրականացման պլան -----	50
6.4. Սանիտարական պահպանության գոտի -----	52
ՏԵՂԵԿԱՆՔ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ԿՈՆԴԻՑԻՍՅՈՒՄՆԵՐ -----	55
ԲՋՆԻԻ ԱԾԽԱԹՎԱՅԻՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ, Մասշտաբ 1: 50 000 -----	56
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ -----	57
ՌՌՌ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՇՇԱԼՑՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ 1 թերթ	

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԱԿՆԱՐԿԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Մասշտաբ 1:300 000



■ - Բլուրիկի ածխաթվային հանքային ջրի հանքավայր

## ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

**Օգտակար հանածո՝** ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո

**Օգտակար հանածոյի պաշարներ՝** օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

**Հանքավայր՝** ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական

**Ջրերի պահպանում՝** ջրերի աղտոտումը և հյուծումը կանխարգելող ու վերացնող միջոցառումներ

**Սանիտարական պահպանման գոտի՝** բնակչության՝ խմելու, առողջապահական, կոմունալ, կենցաղային սպասարկման, բուժիչ, կուրորտային և առողջարարական կարիքների պահանջների բավարարման նպատակով օգտագործվող ջրային ռեսուրսների պահպանման գոտի

**Ստորերկրյա ջրեր՝** ջուր (արտեզյան, գրունտային, բնաղբյուր), որը գտնվում է երկրակեղևը կազմող ապարների մեջ հեղուկ կամ գոլորշի կամ կարծր վիճակում

**Ստորերկրյա քաղցրահամ ջրեր՝** մինչև 1գ/լ հանքայնացմամբ ջրեր

**Ստորերկրյա հանքային ջրեր՝** բարձր հանքայնացմամբ (1գ/լ-ից ավելի) ջրեր, որոնք պարունակում են առանձնահատուկ միկրոբաղադրիչներ: Հանքային ջրերը գլխավորապես օգտագործվում են առողջարանային բուժման համար և որպես սեղանի զովացուցիչ ջրեր

**Ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝** օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով

երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ

**Ազդակիր համայնք՝** շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

**Շրջակա միջավայր՝** բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև

**Շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝** հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝** երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանձուների արդյունանանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

**Կարմիր գիրք՝** հազվագյուտ և ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանիների, բոլյսերի և սնկերի լրացման, խմբագրման ենթակա ցուցակ

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. Նախատեսվող գործունեության համառոտ նկարագրությունը

Ներկայումս «ՌՌՌ» հանքային ջրերի գործարան ՓԲԸ արդյունաբերական (շշալցում) և ազատ ածխաթթու գազ է կորզում ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/67 (2-ԷԿ՝ 1/67-ի կրկնորդ) և 8/69 հորատանցքերից՝ համաձայն 20.10.2012թ. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության տրամադրած արդյունահանման թույլտվությունների՝ ՇԱԹՎ-29/119, ՇԱԹՎ-29/120 և ընդերքօգտագործման պայմանագրերի՝ ՊՎ-119, ՊՎ-120, որոնց գործողության ժամկետն ավարտվում է 25.12.2021թ.:

Ընկերության տրամադրված հանքային ջրի ջրաքանակը կազմում է՝ 244600.0 մ<sup>3</sup>/տարի (94600.0+150000.0) կամ 7.75 լ/վրկ, որից կորզվող ազատ ածխաթթու գազի ծավալը կազմում է 415468.0 մ<sup>3</sup>/տարի:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ «ՌՌՌ» հանքային ջրերի գործարան ՓԲԸ (այսուհետ՝ ընկերություն) սահմանված կարգով դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/67 և 8/69 հորատանցքերի, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքային ջրի և ածխաթթու գազի պաշարները, արդյունահանման թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու և հանքային ջրերի գործարանի արտադրողականության ընդլայնման համար:

Ընկերությունը երկարաձգելով Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունահանման իրավունքն՝ արդյունաբերական (շշալցման) և ազատ ածխաթթու գազի կորզման նպատակով, և իրականացնելով այն կշարունակի ապահովել շուկայի ավելացող պահանջարկը, կպահպանի գոյություն ունեցող մի քանի հարյուրավոր աշխատատեղերը՝ նպաստելով Չարենցավանի համայնքի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը: Բացի դրանից, ընկերությունը

պատրաստ է յուրաքանչյուր տարի աջակցություն ցուցաբերել համայնքի կարիքների բավարարման համար:

Պահանջարկի և արտադրության աճին զուգահեռ անհրաժեշտություն է առաջացել ավելացնել շշալցման համար թիվ 1/67 (2-ԷԿ կրկնորդ) հորատանցքի հանքային ջրի քանակը՝ նախկինում տրամադրված 3լ/վ արտադրողականությունը հասցնել հաստատված 7.0 լ/վրկ չափով, ինչպես նաև հանքային ջրից կորզվող ածխաթթու գազի ծավալը, ինչի հետևանքով և նախատեսվում է ընդլայնել հանքային ջրերի շշալցման գործարանը:

Գործարանում նախկինում տեղադրված սարքավորումների հզորությունները լիովին բավարարում են արտադրողականության ընդլայնման հզորությունները բավարարելու համար (7.0լ/վրկ հանքային ջրի թույլտվություն ստացման դեպքում շշալցնել ողջ հզորությամբ):

Ընկերությունը ավելացնելով հանքային ջրի ջրաքանակը և դրանից կորզվող ածխաթթու գազի ծավալը, կնպաստի պետական բյուջե հարկային մուտքերի ավելացմանը:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 268056.0 մ<sup>3</sup>/տարի կամ 8.5 լ/վրկ, որից կորզվող ազատ ածխաթթու գազի ծավալը կազմում է 687484.8 մ<sup>3</sup>/տարի, այդ թվում՝

Թիվ 1/67 (2-ԷԿ կրկնորդ) հորատանցքից - 220752.0 մ<sup>3</sup>/տարի կամ 7.0 լ/վրկ հանքային ջուր շշալցման համար, որից կորզվող ազատ ածխաթթու գազի ծավալը կազմում է 507729.6 մ<sup>3</sup>/տարի,

թիվ 8/69 հորատանցքից – 47304.0 մ<sup>3</sup>/տարի կամ 1.5 լ/վրկ հանքային ջուր ածխաթթու գազի կորզման համար, որից կորզվող ազատ ածխաթթու գազի ծավալը կազմում է 179755.2 մ<sup>3</sup>/տարի:

Ընկերությունն շշալցված հանքային ջուրը և ազատ ածխաթթու գազն իրացնելու է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Ընկերությունը խնդրում է արդյունաբերական (շշալցում) և ածխաթթու գազի կորզման նպատակով հանքային ջրի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 20 տարի ժամկետով:

Ընկերությունը հանքային ջրից շշալցման գործընթացը մինչ օրս իրականացնում է Չարենցավան քաղաքում գտնվող հանքային ջրերի գործարանում, իսկ ազատ ածխաթթու գազի կորզման գործընթացը՝ Բջնի գյուղի վարչական տարածքում գտնվող ազատ ածխաթթու գազի կորզման արտադրամասում, որոնք հազեցած են անհրաժեշտ տեխնոլոգիաներով և սարքավորումներով:

Ջրհավաք թիվ 2-ԷԿ (1/67-ի կրկնորդ) հորատանցքից դեպի շշալցման գործարան հանքային ջրի տեղափոխումն իրականացվում է 7,7 կմ երկարությամբ 100մմ տրամագծի խմելու որակի խողովակաշարով՝ պոմպի միջոցով կամ չժանգոտվող պողպատից պատրաստված 26.0տ տարողությամբ ցիստեռնով (ЯДИИИ –BM-PS-24P մակնիշի, ՌԴ արտադրության)՝ ըստ արտադրողի կողմից տրված շահագործման ուղեցույցի:

Խողովակաշարը գոյություն ունեցող է և անցնում է մասամբ վերգետնյա, մասամբ ստորգետնյա:

Հանքավայրի ածխաթթու գազի կորզման և շշալցման գործարանի տարածքի հողի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ նշանակության օբյեկտների է, իսկ օգտագործման նպատակը՝ արդյունաբերական օբյեկտների է: Հողամասի տարածքը կազմում է 7.5հա, որի վրա առկա են կառուցապատված շինություններ ընդհանուր 12162.9մ<sup>2</sup> մակերեսով, այդ թվում՝ շշալցման գործարանը իր արտադրական (8389.1մ<sup>2</sup>) և վարչատնտեսական (2214.1մ<sup>2</sup>) մասնաշենքերով, օժանդակ և պահեստային տնտեսություններ (1559.7մ<sup>2</sup>) /տես՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը/:

Գործարանի և արտադրամասի վերակառուցման, ինչպես նաև նոր ժամանակակից տեխնոլոգիաներով և սարքավորումներով հազեցման համար ընկերությունը ներդրել է մոտ 2 մլն Եվրո:

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ շահագործման և արտադրության կազմակերպման համար ընկերությունը համալրված է բազմափորձ մասնագետներով:



«ՌՌՌ» հանքային ջրերի գործարան ՓԲ ընկերությունը հայկական ջրերի շուկայի առաջատարներից է, որն իր գործունեության առաջին իսկ օրվանից ընտրել է դինամիկ զարգացման ուղի և սպառողների պահանջների ու սպասելիքների բավարարման սկզբունքին հավատարիմ մնալով մշտապես ապահովել է բարձր որակ՝ տարեցուտառի առաջարկելով առավել թարմացված և որակյալ ապրանքատեսականի:

«Բջնի» և «Նոյ» ապրանքատեսակների բարձր որակական հատկությունների մասին են վկայում բազմաթիվ սերտիֆիկատներն ու պատվոգրերը, փորձագետների և սպառողների բարձր գնահատականը:

Ընկերությունում ստեղծված են ժամանակակից արտադրությանը ներկայացվող բոլոր պահանջներին բավարարող արտադրական պայմաններ ու մշտապես իրականացվում են բարեփոխման ու բարելավման գործընթացներ:

Ընկերությունը՝ հավատարիմ լինելով կորպորատիվ և սոցիալական պատասխանատվության սկզբունքներին նախորդ 10 տարիների ընթացքում կատարել է համայնքին ուղղված միջոցառումների շարք: Դրանք ունեցել են սոցիալական, ինչպես նաև բնապահպանական նշանակություն: Համայնքի հետ սերտ համագործակցության արդյունքում մաքրվել է Հրազդան գետի հունը, վերանորոգվել կամ ջեռուցվել են Բջնի համայնքի կրթօջախները, գետի մերձակայքում տեղադրվել են ժամանցի տաղավարներ համայնքի բնակիչների համար: Բարձր գնահատելով համայնքի դերը գործարանի զարգացման մեջ՝ ընկերությունը պատրաստակամ է շարունակել իր կորպորատիվ և սոցիալական քաղաքականությունը, համայնքի զարգացմանը տարեկան տրամադրելով մինչև մեկ միլիոն դրամ:

## **1.2. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքերը**

Շրջակա միջավայրը մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և իր վրա ազդեցության գնահատման կարիքն ունի:

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման

հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

1. ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք, որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:
2. ՀՀ Ջրային օրենսգիրք, որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
3. ՀՀ Հողային օրենսգիրք, որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
4. ՀՀ Անտառային օրենսգիրք, որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
5. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք, որը սահմանում է պետական քաղաքանությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն

հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

6. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների Հայաստանի Հանրապետությունում պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքանությունը:
7. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք, որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:
8. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենք», որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
9. ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որով սահմանվում են խախտված հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների:
10. ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշում, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

11. ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012 թվականի N 1484-Ն որոշում, որը սահմանում է ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների իրականացումը, որը կապահովի ջրային ռեսուրսները սպառումից և աղտոտումից պահպանելը:
12. «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը:
13. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.):
14. ՀՀ կառավարության 29 հունվարի 2010 թվականի N 71-Ն որոշում:
15. ՀՀ կառավարության 29 հունվարի 2010 թվականի N 72-Ն որոշում:
16. ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008 թվականի N 967-Ն որոշում:

## 2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի տարածքում:

Կոտայքը միակ մարզն է, որը միջպետական սահման չունի Հայաստանի հարևան որևէ պետության հետ: Կոտայքը միաժամանակ նաև այն չորս մարզերից մեկն է, որոնք անմիջապես հարում են մայրաքաղաք Երևանին:

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900- 2500մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանն ու Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գուրանասար, իսկ հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին:

Մարզի տարածքով են անցնում Երևան-Շորժա և Հրազդան-Իջևան երկաթուղիները, իսկ մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք ընդամենը 45 կմ է:

Կոտայքի մարզը զբաղեցնում է 2089 կմ<sup>2</sup> տարածք: Ըստ 2011 թվականի տվյալների՝ մարզի բնակչությունը կազմում է 254397 մարդ: Մարզի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 98,08% հայեր են: Ապրում են նաև ռուսներ, եզդիներ, ասորիներ, քրդեր, ուկրաինացիներ և այլ ազգիներ:

Համայնքների թիվը՝ 67, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 60:

Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին:

ՀՀ Կոտայքի մարզը բաղկացած է երեք տարածաշրջաններից՝ Հրազդանի, Արուսիանի և Նաիրիի: Կոտայքի կենտրոնական տարածաշրջանը Հրազդանն է: Մարզկենտրոնն է քաղաք Հրազդանը:

Կոտայքի մարզի տնտեսության գերակա ճյուղերը երկուսն են՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը:

Համախառն ներքին արդյունքի ամենամեծ մասնաբաժինը բաժին է ընկնում արդյունաբերությանը: Արդյունաբերության ճյուղերից առաջատար են համարվում էներգետիկայի, մեքենաշինական և սննդի արդյունաբերության, քարամշակման,

հանքարդյունահանման, ձկնաբուծության, շինանյութերի և փայտամշակման ոլորտները:

Արդյունաբերության արտադրանքի մեծ մասը բավարարում է հայաստանյան շուկայի ներքին պահանջները, իսկ մի մասն էլ արտահանվում է արտասահման՝ Ռուսաստանի Դաշնություն, Չինաստան, Վրաստան, Բուլղարիա, Իրանի Իսլամական Հանրապետություն:

Տնտեսության զարգացման հեռանկարները կապված են մշակող արդյունաբերության աճի, հանքային հարստությունների շահագործման և մերձերևանյան գոտում գյուղատնտեսական արտադրանքի ավելացման հետ: Հայաստանի Կոտայքի մարզի տնտեսական ներուժին զգալի վնաս է հասցրել նախկինում տասնյակ հազարավոր աշխատատեղեր ապահովող խոշոր կազմակերպությունների քայքայումը՝ սեփականաշնորհման, հումքի, իրացման շուկաների նվազման կամ բացակայության և հիմնական միջոցների բարոյաֆիզիկական մաշվածության հետևանքով: Մարզի տասնյակ մեքենաշինական, թեթև և սննդի արդյունաբերական ձեռնարկություններ դադարեցրեցին իրենց գործունեությունը կամ էլ սկսեցին աշխատել փոքրածավալ հզորությամբ: Կոտայքի մարզի կայուն զարգացող ոլորտներից է էներգետիկ արդյունաբերությունը: Դրա երաշխիքներն են 17 հիդրոէլեկտրակայանների և «Հրազդան-5» էներգաբլոկի առկայությունը:

Գյուղատնտեսությունը մարզի տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է: Հայաստանի այս մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում

կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Բնորոշ է ինտենսիվ ապրանքային ճյուղերի զարգացումը: Մասնագիտացած է, որպես այգեգործական-անասնապահական շրջան՝ ծխախոտագործության ու բանջարաբուծության օջախներով: 2012 թվականին Կոտայքի հողային ֆոնդը կազմել է 84283հա, որից վարելահող՝ 14569հա, խոտհարք՝ 3162հա, արոտավայր՝ 26469հա, խաղողի և պտղատու այլ այգիներ՝ 5059հա, այլ (գյուղատնտեսության մեջ չօգտագործվող) հողեր՝ 27611հա, անտառներ՝ 6479հա:

Մարզի տարածքում են գտնվում հազարից ավելի պատմամշակութային օբյեկտներ՝ կրոնական կառույցներ, հայտնի անձանց տուն-թանգարաններ, խաչքարեր և այլն: Մարզում գրանցված են ավելի քան 2024 պատմամշակութային արժեքներ եւ հուշարձաններ:

Հրազդանի տարածաշրջանը գտնվում է Հրազդան գետի վերին և միջին ավազանում: Տարածքի մեծ մասն ունի 1500 -2400 մ բարձրություն: Առավելագույն բարձր կետը Թեժ լեռան կատարն է՝ 3101.0 մ: Հյուսիսում ձգվում են Մարմարիկի վտակներով խիստ մասնատված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, արեւելքում՝ Գեղամա լեռնաշղթայի հյուսիս-արեւմտյան լեռնաճյուղերն ու լավային հոսքերը: Հարավ-արեւելքում բարձրանում են Գութանասար, Մենակսար հրաբխային կոները:

Հրազդանում մինչ օրս գործում է ջերմաէլեկտրակայան և ջրաէլեկտրակայան, որոնք բավարարում են Հայաստանի էներգետիկ պահանջների մի մասը: Հրազդանի տարածաշրջանում է գտնվում նաև Չարենցավան քաղաքը, որտեղ խորհրդային տարիներին զարգացած է եղել մեքենաշինական, հաստոցաշինական արդյունաբերությունը, որն այժմ գրեթե վերացել է: Այստեղ է գտնվում նաև Հայաստանի խոշորագույն զբոսաշրջային կենտրոններից մեկը՝ Ծախկաձոր քաղաքը: Զբոսաշրջային կենտրոններից են նաև Հանքավանը, Արզականի տարածքում գտնվող Աղվերան հանգստյան գոտին:

Տարածաշրջանի գյուղական համայնքներն են՝ Ալափարս, Աղավնաձոր, Արզական, Արտավազ, Բջնի, Լեռնանիստ, Կարենիս, Հանքավան, Մարմարիկ, Մեղրաձոր, Սոլակ, Ջրառատ, Քաղսի և Ֆանտան:

Չարենցավան համայնքի Բջնի ազդակիր բնակավայրը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Առաջին անգամ նրա մասին հիշատակում է պատմիչ Ղազար Փարպեցին: Գտնվում է Հրազդան գետի աջ ափին, Հրազդան քաղաքից 13.0կմ հեռավորության վրա, միջին բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550.0 մ:

Բջնի բնակավայրի վարչական տարածքը կազմում է 6925.67հա, որից վարելահողեր՝ 1170հա, խոտհարք՝ 370.2հա, արոտավայր՝ 1745.44հա, դաշտային ճանապարհներ՝ 20հա, արտադրական հողեր՝ 26.71հա, տնաներձ հողեր՝ 154.67հա, դպրոց՝ 1.5հա, հուշարձան՝ 0.08հա, գյուղամիջյան փողոցներ՝ 9հա, պետական պահուստային հողեր՝ 819.68հա, համայնքի սեփականություն հանդիսացող հողեր՝ 2608.39հա:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ Բջնի բնակավայրի բնակչությունը կազմել է 3004 մարդ, իսկ տնային տնտեսությունների թվաքանակը՝ 774: Բնակչության 52% կազմում են տղամարդիկ և 48%-ը կանայք:

Գյուղում գործում են՝ 1 դպրոց, 1 մանկապարտեզ, 1 մշակույթի տուն, 1 գրադարան:

Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն է, թռչնաբուծությունն և անասնապահությունը: Գյուղն հայտնի է իր հանքային ջրով և շատ պատմամշակութային հուշարձաններով:

Միջին դարերում Բջնին հայ գրչության կարեւորագույն կենտրոններից էր: Մեզ են հասել 12-17 դդ. այնտեղ ընդօրինականացված հայերեն մի քանի ձեռագրեր:

Գյուղի տարածքում 1929 թվականի պեղումների ընթացքում հայտնաբերվել է բազմաթիվ մշակութային արժեք ներկայացնող հուշարձաններ, այդ թվում խաչքարեր, դամբարաններ, տապանաքարեր, գետնուղի-գաղտնուղիներ, մի քանի ավերված եկեղեցիների հիմքեր ու փլատակներ: Բջնիի կենտրոնում են գտնվում Սուրբ Գևորգ (8-րդ դար) և Մբ. Աստվածածին (1031 թվական) եկեղեցիները, իսկ հյուսիսարևելյան կողմում՝ բլրի գագաթին, սրբատաշ տուֆից VIIդ. կառուցվել է Ս.Սարգիս խաչածն գմբեթավոր եկեղեցին: Եկեղեցու պատերին կան վիմափոր արձանագրություններ, ժայռապատկերների ոճով երկու կենդանապատկեր: Վերանորոգվել է 1947 թվականին:

7-րդ դարի Ս.Սարգիս եկեղեցի





Միջնադարյան ամրոցաշինության նշանավոր կառույցներից մեկը՝ Բջնիի ամրոցը, գտնվում է Հրազդան գետի աջ ափին, գյուղի արևելյան կողմում, անառիկ ժայռերով շրջապատված բարձրադիր հրվանդանի վրա: Հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ: Հիշատակվում է վաղ միջնադարից: Պահլավունի իշխանները 10-րդ դարում վերաշինել են քարածայռերի վրա եղած հինավուրց բերդը, այն դարձրել միջնադարյան Հայաստանի հզոր ամրոց և Բագրատունյաց Հայաստանի Անի մայրաքաղաքը հյուսիսից պաշտպանող կարևոր հենակետ: Ամրոցը գյուղը բաժանում է երկու մասի (Մեծ Բջնի և Փոքր Բջնի): Հարավից, արևելքից և մասամբ արևմուտքից ամրոցը պաշտպանված է վերձիգ, անդնդախոր ժայռերով, իսկ հյուսիսից և արևմուտքից՝ կոպտատաշ որձաքարերով և կրաշաղախով կառուցված, կիսաբլուր աշտարակներով հզորացված պարսպապատերով, որի երկարությունը հասնում է 120 մ:

Ստորև ներկայացվում է Բջնիի ամրոցի պարիսպները 2007-2008 թվականների վերանորոգումից հետո



Վերջին շրջանում մեծ թափով գյուղում զարգանում է զբոսաշրջությունը՝ ՄԱԿ-ի և համայնքի ջանքերով կառուցվել է թանգարան (Բջնիի ամրոցի հավաքածու), իսկ արևային մարտկոցների շնորհիվ տեղադրվել է լուսավորություն ամրոցի պարիսպների մոտ, որը գիշերային ժամերին մեծ շուք է հաղորդում նրան: Գործում են հյուրատներ և հանգստյան գոտիներ: 2016թ-ին գյուղի տուրիզմը զարգացնելու նպատակով նորոգվել է ճանապարհերը

Հանքային ջրերի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել է ազդակիր համայնքի բնակիչներին:

«ՌՌՌ» հանքային ջրերի գործարան ՓԲ ընկերությունը շարունակելով իրականացնել Բջնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/67 և 8/69 հորատանցքերից հանքային ջրի արդյունահանման աշխատանքները կպահպանի գոյություն ունեցող աշխատատեղերը՝ նպաստելով Չարենցավանի համայնքի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը, ինչպես նաև համապատասխան ֆինանսական ներդրումներ կկատարի համայնքի բյուջը հանքային ջրի արդյունահանման աշխատանքները սկսելուց հետո:

### 3. ՇՐՋԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

**Ընդհանուր տեղեկություններ.** Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի տարածքում, Չարենցավան քաղաքից 10.0 կմ դեպի հյուսիս, Հրազդան գետի հովտում:

Չարենցավան և Հրազդան քաղաքների միջով է անցնում Երևան-Սևան երկաթգիծը: Հանքավայրի մոտակայքից է անցնում բարեկարգ ասֆալտապատ Երևան-Սևան-Նոյեմբերյան մայրուղին:

Մոտակա երկաթգծի կայան է հանդիսանում ք. Հրազդանը, որն հանքավայրից գտնվում է 20.0 կմ հեռավորության վրա:

Բազմազան ու հարուստ են տարածաշրջանի օգտակար հանածոները: Մեծ արժեք են ներկայացնում նեֆելինային սիենիտների, ոսկու, երկաթի, տիտանի, մարմարի, բազալտի, կրաքարի, պերլիտի, հանքային ջրերի (Արզականի, Բջնիի, Հանքավանի, Քարաշամբի, Արզնիի) և այլ շինանյութերի հանքավայրերը:

**Երկրաձևաբանություն.** Հրազդան գետի երկու ափերին, տարածվում են Կոտայքի և Եղվարդի թույլ մասնատված լավային սարավանդերը: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1200-1300 մետր բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1700-1800 մետր բարձրության վրա):

Գեոմորֆոլոգիական տեսակետից հանքավայրի տարածքը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջի սահմաններում, որն իրենից ներկայացնում է բյուրեղային բարձրացում խիստ մասնատված էրոզիոն-կառուցվածքային ռելիեֆով:

Ռելիեֆը խիստ բարդացված է բազմաթիվ համեմատաբար նեղ և խորը Y-ա ձև կիրճերով և ձորակներով:

Թեք ու անտառագուրկ լանջերում շատ են հեղեղատներն ու փոքր հովիտները:


Հանքավայրի հիպսոմետրիկ բացարձակ նիշերը տատանվում են 1480.0-1505.0 մ սահմաններում:

Հանքավայրի երկրաձևաբանական և լանջերի թեքությունների սխեմատիկ քարտեզները բերվում է ստորև՝





**ՌԵԼԻԵՖԻ ՉԵՎԱԳՐԱԿԱՆ ՏԻՊԵՐ ԵՎ ՉԵՎԵՐ  
ՏԻՊԵՐ  
Լեռներ**


*Բարձրլեռնային գոտի (2 800 մ և բարձր)*


 Չառիթափ, ուղիղ լանջերով, հովտաձորակային ցանցով խիտ ու խոր մասնատված


*Միջինլեռնային գոտի (1 500-2 800 մ )*

 Չառիթափ, ուղիղ լանջերով, աստիճանակերպ կատարով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված


 Անհամաչափ, աստիճանակերպ լանջերով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված

 Չափավոր զառիթափ-գոգավոր լանջերով, մասնատված հովտաձորակային ցանցով


 Ուռուցիկ լանջերով գմբեթաձև լեռնազանգվածներ՝ մասնատված հովտաձորակային ցանցով


 Մնացուկային բարձունքներ՝ ձորակներով թույլ մասնատված

*Ցածրլեռնային գոտի (մինչև 1 500 մ )*

 Մեղմաթեք, մասամբ ժայռոտ լանջերով, մասնատված V-աձև, երբեմն արկղաձև հովիտներով

Նկար 2.





Նկար 3

**Ջրային ռեսուրսներ.** Կոտայքի մարզն աչքի է ընկնում ներքին ջրերի առատությամբ: Գետերից Հրազդանը, Գետառը, Ագատը ունեն ոռոգիչ նշանակություն:

Հրաբխածին-նստվածքային ապարների մեջ ներծծված ջրերն աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ագատ գետերի կիրճերում:

Տարածաշրջանի գլխավոր ջրային երակն է Հրազդան գետն է, որը սկիզբ է առնում Սևանալճից և թափվում է Արաքս գետը: Գետի երկարությունը 146.0 կմ է:

Տեղամասում Հրազդան գետի աջակողմյան վտակներից են Բջնի և Դալար գետերը:

**Կլիմա.** Շրջանի կլիման բնութագրվում է մեղմ մայրցամաքային կլիմայով՝ խիստ ամառ և ձմեռ ունեցող կլիմա: Շրջանի կլիման ըստ բարձրության փոխվում է տաք չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10 °C-ից մինչև 2.5 °C:

Տարվա ամենատաք ամիսը հուլիսն է, իսկ ամենացուրտը՝ հունվարը: Կոտայքի մարզի ցածրադիր շրջաններում միջին հունվարյան ջերմաստիճանը կազմում է 4.5-5 °C: Բարձրադիր շրջաններում հունվարյան ջերմաստիճանը նվազում է մեկ և ավելի ջերմաստիճանով՝ -3.6 °C:


Կոտայքի մարզի բարձրադիր շրջաններում ամառվա ամենատաք ամսին գրանցվում է միջինում 8.7 °C ջերմություն: Ցածրադիր շրջանների եղանակային պայմանները բավականին տարբեր են: Միջին հուլիս-օգոստոսյան ջերմաստիճանը ցածրադիր գոտիներում կազմում է 22.2 °C և ավելի:

Ամենացածր ջերմաստիճանը Կոտայքի մարզում գրանցվում է Աժդահակ լեռան գագաթին:Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է՝ 400-970 մմ: Տարբեր ամիսներին տեղում է անձրև, կարկուտ, իսկ ձմեռային ամիսներին՝ ձյուն:

Անաստանամանիք օրերի թիվը մարզի ստորին գոտում կազմում է շուրջ 200 օր:

Ամենուր դիտվում են լեռնահովիտային քամիներ: Օդի բազմամյա միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 67.0%:

Նկար 4. Կլիմայի տարածման սխեմատիկ քարտեզ



**Հողաբուսական ծածկույթ.** Կոտայքի մարզի հողաբուսական ծածկույթը բավականին խայտաբղետ է: Գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, բարձրադիր վայրերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը: Սարավանդներին բնորոշ են շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերին սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստաններ: Ծաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ տարածվում են գորշ դարչնագույն հողերը: Բարձրադիր լեռնային գոտուն բնորոշ է լեռնամարգագետնային լանդշաֆտը: Գետահովիտներում կուլտուրացված ոռոգվող հողեր են: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային արոտավայրերը:

Հանքավայրի տեղամասին բնորոշ են լեռնաանտարային գորշ և դարչնագույն հողերը: Այս հողերում մշակում են հացահատիկային, բանջարաբոստանային բույսեր, պտղատու ծառեր:


Բուսականության տեսակային կազմի տարածքային տարբերությունը համընկնում է կլիմայի և հողերի վերընթաց գոտիականությանը:

Տափաստանային գոտու բուսականությունը մեր հանրապետությունում տարածված 1400-2400 մ բարձրություններում: Այս գոտուն բնորոշ է փետրախոտային, սիզախոտային, իսկ բարձրադիր մասում՝ հացազգի-տարախոտային բուսականությունը: Տափաստանային գոտու վերին սահմանին մոտ, որտեղ խոնավությունը բավարար է, աճում են մերձալպյան բարձրախոտերը: Այս տարածքները լավ խոտհարքեր են:

Կոտայքի մարզի բուսականության հիմնական տիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին աճում են հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն:

Կոտայքի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն

Ստորև նկար 5-ում ներկայացվում է հողերի տարածման սխեմատիկ քարտեզը՝





ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐ

<p>1 Լեռնամարգագետնային ճնատորֆային խճային</p> <p>2 Լեռնամարգագետնային ճնային խորքային հագեցած</p> <p>3 Լեռնամարգագետնային ճնային խորքային չհագեցած</p> <p>4 Լեռնամարգագետնային թույլ ճնային խորքային հագեցած</p> <p>5 Լեռնամարգագետնային թույլ ճնային խորքային չհագեցած</p> <p>7 Մարգագետնատափաստանային սևահողանման խճաքարային</p> <p>9 Մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային չհագեցած</p> <p>12 Անտառային գորշ ուժեղ չհագեցած կավայնացած</p> <p>17 Անտառային դարչնագույն կրազերծված խճաքարային</p> <p>18 Անտառային դարչնագույն կրազերծված տափաստանացված</p>	<p>32 Սևահող տիպիկ պրային կարբոնատային</p> <p>24 Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված</p> <p>34 Սևահող կարբոնատային մնացորդային կարբոնատային</p> <p>35 Մարգագետնասևահողային կոպճային</p> <p>36 Մուգ շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած</p> <p>37 Մուգ շագանակագույն մնացորդային կարբոնատային</p> <p>38 Շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած</p> <p>39 Շագանակագույն մնացորդային կարբոնատային</p> <p>55 Գետահովտադարավանդային մարգագետնային կոպճային</p> <p>56 Գետահովտադարավանդային մարգագետնացած կոպճային</p>
--	--


**Կենդանական աշխարհը.** Կենդանական աշխարհի տեղաբաշխումն իր հերթին համապատասխանում է բուսական գոտիների դասավորությանը: Կոտայքի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, լուսան, նապաստակ և այլն:

Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Կոտայքի մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր: Կոտայքի մարզի սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իժը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճայ, կովկասյան մայրեհավ, տափաստանային արծիվ և այլն:

Տափաստանային գոտում համեմատաբար շատ են կրծողները և թռչունները, քիչ են սողուններն ու երկկենցաղները: Լայն տարածում ունեն ճագարամուկը, գետնասկյուռը, դաշտամուկը, խլուրդը, իսկ գիշատիչներից հանդիպում է ժանտաքիսը: Թռչուններից

նշանավոր են միջատակեր սարյակները, սևճակատ շամփուկը, որոնք սնվելով մշակաբույսերին վնասող միջատներով է մեծ օգուտ են տալիս գյուղատնտեսությանը:

Հանքային ջրի հորատանցքի բուն տարածքում բույսեր կամ կենդանիներ, որոնք գրանցված են ՀՀ Բույսերի կամ Կենդանիների Կարմիր գրքերում բացակայում են:



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ  
ԲՆԱԿԱՆ ԲՈՒՄԱԾԱԾԿԻ ՏԻՊԵՐ

**Մարգագեղանային բուսականություն**

- 1 Բարձրալայան տարախոտա-հացազգա-բոշխային (գորգեր) մասնակցությամբ՝ *Campanula tridentata* Schreb., *Carex tristis* Bieb., *Taraxacum stevenii* DC., *Plantago saxatilis* Bieb., *Colpodium araraticum* Tarutv., *Poa alpina* L., *Carum caucasicum* (Bieb.) Boiss., *Nardus glabriculumis* Sakalo, *Sibbaldia parviflora* Willd.
- 2 Ցածրալայան (ենթալայան) հացազգիների և տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ *Bromopsis variegata* (Bieb.) Holub, *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Anemonastrum fasciculatum* (L.) Holub, *Betonica macrantha* C. Koch, *Veronica*, *Gentiana*, *Cephalaria*, *Inula*, *Myosotis* ցեղի տեսակների հետ համատեղ

**Մարգագեղանափափասրանային բուսականություն**

- 3 Մասնակցությամբ՝ *Festuca versicolor* Tausch, *F. ovina* L., *F. valesiaca* Gaudin, *Phleum pratense* L., *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Carex humilis* Leys, *Trifolium ambiguum* L.

**Անդառային բուսականություն**

- 4 Լայնատերև, մասնակցությամբ՝ հաճարենու (*Fagus orientalis* Lipsky) կաղնու (*Quercus iberica* Stev. *Q. macranthera* Fisch. et Mey. ex Hohen), բոխու (*Carpinus betulus* L., *C. orientalis* Mill), հացենու (*Fraxinus excelsior* L.), լոբենու (*Tilia begoniifolia* Stev.).
- 5 Կաղնուտներ, մասնակցությամբ՝ *Quercus macranthera* Fisch. et Mey. ex Hohen., *Q. boissieri* Beut., *Q. araxina* (Trautv.) Grossh
- 6 Անտառային խառը մշակաբույսեր, մասնակցությամբ՝ *Pinus pallasiana* D. Don, *P. banksiana* Lamb., *Fraxinus excelsior* L., *Hippophae rhamnoides* L., տեսակներ *Salix*, *Acer*, *Ulmus* և ավազուտային տարախոտերի


**Ըտերոֆիլ անտառային բուսականություն**

- 7 Գիհու խառը, մասնակցությամբ՝ *Juniperus polycarpus* C. Koch, *J. oblonga* Bieb., *J. hemisphaerica* J. et C. presl., *J. foetidissima* Willd., *J. Sabina* L., *Ephedra procera* Fisch. et Mey.
- 8 Սաղարթավոր խառը, մասնակցությամբ՝ *Paliurus spina-christi* Mill., *Spiraea crenata* L., *Amugdalu fenzliana* (Fritsch) Lipsky, *Pistacia nutica* Fisch. et Mey. *Celtis glabrata* Stev. Ex Planch., *Cerasus incana* (Pall.) Spach, *Pyrus salicifolia* Pall.

Նկար 6. Բնական բուսածածկի տիպեր



## ԿԵՆՂԱՆԱՏԵՍԱԿՆԵՐ



Նկար 7. Կենդանատեսակների սխեմատիկ քարտեզ

ՀՀ Կոտայքի մարզի հուշարձանների ցանկը համաձայն ՀՀ կառավարության 967-Ն որոշման՝

- Երկրաբանական հուշարձաններ՝ - Գետնագաղա»** անձավային թունել Լոռու մարզ, Լոռիբերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Ձորագետի ձախ ափին, հունից 40մ բարձրության վրա
- «Անանուն» խզվածքներ Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
  - «Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
  - «Թագավորանիստ» խարամային կոն Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում **34.«Պեռլիտե փիղ»** քարե քանդակ Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
  - «Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավձի կրաքարերի կոնտակտ Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
  - «Ծակ քար» բնական թունել Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
  - «Բագալտե երգեհոն» սյունաձև բագալտներ Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
  - «Անանուն» քարայր սյունաձև բագալտներում Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
  - «Անանուն» լանջային երոզիա Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին
  - «Անանուն» լավային ծալքեր Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
  - «Անանուն» խորշեր Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ

- «**Հատիս**» հրաբուխ Կոտայքի մարզ, Զովաշեն գյուղից 2.0 կմ արևմուտք
- «**Ավազան**» հրաբխային գմբեթ Կոտայքի մարզ, Կարենիս (Գյումուշ) գյուղից 1.5 կմ հս-արլ
- «**Գյումուշ**» հրաբխային գմբեթ Կոտայքի մարզ, Կարենիս (Գյումուշ) գյուղից 0.5 կմ հս-արլ
- «**Անանուն**» ապարների բնորոշ մերկացում Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Գյումուշ ՀԵԿ-ի միջև
- «**Անանուն**» օբսիդիանի ելքեր Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
- «**Անանուն**» քարե կուտակումներ Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
- «**Գուրանասար**» հրաբուխ Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ
- «**Լեռնահովիտ**» քարային կուտակումներ Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարար» գյուղատեղիի մոտ
- «**Ձորաղբյուրի**» (Մանգյուսի) բրածո ֆլորա Կոտայքի մարզ, գյուղ Ձորաղբյուր

**Ջրաերկրաբանական հուշարձաններ**

- «**Հաղարտանք**» աղբյուր Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
- «**Համով**» աղբյուր Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
- «**Քաղցր**» աղբյուր Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
- «**Ձորի**» աղբյուր Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
- «**Աուզի**» աղբյուր Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա

**Ջրագրական հուշարձաններ`**

- «**Ղազ**» լիճ Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
- «**Վիշապա**» լիճ Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
- «**Բիշար**» լիճ Կոտայքի մարզ, Սարաբերդ (Սևաբերդ) գյուղից մոտ 3 կմ հս
- «**Զեյնալ**» լիճ Կոտայքի մարզ, Սարաբերդ (Սևաբերդ) գյուղից մոտ 7 կմ հս-արլ

**Կենսաբանական հուշարձաններ**

- «Ալայան գորգ» Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, 300 մ բարձրության վրա)
- «Թանթրվենի, Տիգրանի» Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

**Հանքավայրի պաշարները.** Բջնիի հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրության նպատակով որոնողա-հետախուզական և հետախուզական աշխատանքները, որոնք ուղեկցվել են ինչպես հանույթային, հորատման, այնպես էլ համալիր հիդրոերկրաբանական փորձնական աշխատանքներով կատարվել են 1967-1969թ.թ և 1969-1970թթ-ին:

ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործողական պաշարները 01.11.1970թ.-ի դրությամբ հաստատվել են ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի (ՊՊՀ) կողմից (արձանագրություն թիվ 6141, 20.01.1971թ.): Հանքավայրի շահագործողական պաշարները հաշվարկվել են չորս հորատանցքերով, այդ թվում՝

**Հանքային ջրի պաշարներ՝**

- 1/67 հորատանցքով - B կարգի՝ 7.0 լ/վրկ կամ 604.8 մ3/օր,
  - 3/67 հորատանցքով - B կարգի՝ 0.4 լ/վրկ կամ 34.5 մ3/օր,
  - 8/69 հորատանցքով - B կարգի՝ 1.5 լ/վրկ կամ 129,6 մ3/օր,
  - 9/69 հորատանցքով - B կարգի՝ 1.5 լ/վրկ կամ 129,6 մ3/օր:
- Ընդամենը՝ 10.4 լ/վրկ կամ 898.5 մ3/օր

**Ազատ ածխաթթու գազի պաշարներ՝**

- 1/67 հորատանցքով - B կարգի՝ 3.2 գ/լ կամ 2.3 մ3/մ3,
  - 3/67 հորատանցքով - B կարգի՝ 3.7 գ/լ կամ 2.5 մ3/մ3,
  - 8/69 հորատանցքով - B կարգի՝ 5.0 գ/լ կամ 3.8 մ3/մ3,
  - 9/69 հորատանցքով - B կարգի՝ 3.1 գ/լ կամ 2.1 մ3/մ3:
- Ընդամենը՝ 15.0 գ/լ կամ 10.7 մ3/մ3

Հանքավայրի շահագործողական պաշարները կարող են օգտագործվել շշայցման, բուժման և ազատ ածխաթթու գազի կորզման նպատակով:

Բջնիի հանքավայրը հանդիսանում է ածխաթթվային հանքային ջրերի ճեղքաերակային ջրաճնշումային համակարգ, տեղադրված Հրազդանի բեկվածքի գոտու սահմաններում և գենետիկորեն կապված են ուժեղ ջախջախված, ճեղքավորված, մետամորֆացված թերթաքարերի հետ, որոնք պատռված են պալեոզոյան գնանիտուդային ինտրուզիաներով:

Բջնիի հանքավայրի սահմաններում բացահայտված է երկու տեղամաս, որոնք բնորոշվում են տարբեր հիդրոերկրաբանական առանձնահատկություններով:

Առաջին տեղամաս (հիմնական)՝ տեղադրված է Հրազդան գետի աջ ափին և համընկնում է Հրազդանի բեկվածքի ջրառատ թևի հետ, որտեղ ջրի ծախսերը և ջերմաստիճանները մեծ են (մինչև 10.0 լ/վրկ և 40.0 0C):

Երկրորդ տեղամաս՝ տեղադրված է Հրազդան գետի ձախ ափին և համընկնում է Հրազդանի բեկվածքի իջեցված, համեմատաբար խտացված թևի հետ, որտեղ ջրի ծախսերը և ջերմաստիճանները բավականի փոքր են (մինչև 0.4 լ/վրկ և 21.0-30.00C):

Հանքավայրի հիմնական ջրատար արդյունաբերական գոտին, որի հանքային ջրերը բավարարում են կոնդիցիայի պահանջներին հայտնաբերվել է թիվ 1/67 հորատանցքում 33.0-100.0մ, իսկ թիվ 8/69 հորատանցքում՝ 45.0-65.0մ և 135.0-250.0մ միջակայքերում և ներկայացված են ուժեղ ջախջախված, ճեղքավորված, մետամորֆացված թերթաքարերով, պատռված պալեոզոյան գնանիտուդային ինտրուզիաներով:

Հանքային ջրերի ռեժիմը տարեկան կտրվածքում արտահայտվում է ծախսի, ջերմաստիճանի և քիմիական կազմի կայունությամբ:

Հանքավայրի հորատանցքերը շատրվանում են հիմնականում գազլիֆտի հաշվին դինամիկ մակարդակի իջեցումով երկրի մակերեսից ներքև:

Բջնիի հանքային ջրերը ածխաթթվային են (CO<sub>2</sub>-98.0-99.6%), թույլ թթվային (pH-6.5-6.6), սիլիկատային (H<sub>2</sub>SiO<sub>3</sub>-109.0-180.0մգ/լ); Ըստ քիմիական կազմի հիդրոկարբոնատ-նատրիումային են 4.2-6.5գ/լ հանքայնացումով և 16.1-35.50C ջերմաստիճանով:

Լուծված CO2 գազի պարունակությունը կազմում է 1.1-1.8գ/լ, իսկ ազատ CO2 գազինը՝ 3.1-5.0գ/լ:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտների չնչին քանակի պարունակությունը չի գերազանցում թույլատրելի սահմանները:

Հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոք է:

Ջրի քիմիական անալիզները կատարվել են Երկրաբանական վարչության «Կենտրոնական», այժմ «Անալիտիկ» և ՀՀ Ազգային ակադեմիայի երկրաբանական ինստիտուտի հիդրոքիմիայի լաբորատորիաներում, իսկ հսկիչ անալիզները՝ ՀՀ առողջապահության նախարարության «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ լաբորատորիայում:

Հանքավայրի ջրերը կարելի է հաջողությամբ օգտագործել որպես բուժիչ-խմելու ջուր, ինչպես շշալցման, այնպես էլ հանքաջրաբուժական նպատակով:

1975 թ.-ին թիվ 1/67 հորատանցքի կողքը հորատվել է ջրհավաք թիվ 2-ԷԿ հորատանցքը, որպես 1/67 հորատանցքի կրկնորդ: Ջրհավաք թիվ 2-ԷԿ հորատանցքը մինչև 1981 թ.-ի օգոստոս ամիսը եղել է կոնսերվացված: 1981 թ.-ի օգոստոսի 1-ից մինչ օրս, թիվ 1/67 հորատանցքի շարքից դուրս գալուց հետո, հանքային ջրի շահագործումը իրականացվում է ջրհավաք թիվ 2-ԷԿ կրկնորդ հորատանցքից:

Թիվ 1/67 (2-ԷԿ կրկնորդ) հորատանցքը գտնվում է Բջնի գյուղի հանքային ջրերի շշալցման գործարանի տարածքում, Հրազդան գետի աջ ափին, իսկ թիվ 8/69 հորատանցքը գտնվում է 1/67 հորատանցքից 310.0մ դեպի արևմուտք, Հրազդան գետի աջ ափին (տես իրավիճակային հատակագիծը):

Հորատանցքերի կոորդինատներն են՝

Հորատանցքի համարը	I. CK-42 կոորդինատների համակարգով		II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով		Հորատանցքի բացարձակ բարձրությունը, մ
	X	Y	X	Y	
2-ԷԿ (1/67-ի կրկնորդ)	X = 4480755	Y = 8470942	X = 4480748	Y = 8470840	1494.6
8/69	X = 4480713	Y = 8470644	X = 4480706	Y = 8470542	1488.7



Թիվ 1/67 հորատանցքով կտրվել է հանքային ջրի 1 ջրատար հորիզոն տեղադրված 33.0-100.0մ խորության վրա: Հանքային ջրի ստատիկ մակարդակը 0.58մ երկրի մակերևույթից ներքև է, ջերմաստիճանը կազմում է 28.10C, ծախսը՝ 7.0լ/վրկ, հանքայնացումը՝ 5.9գ/լ, լուծված ածխաթթու գազի պարունակությունը՝ 1.2գ/լ, իսկ ազատ գազինը՝ 3.2գ/լ: Ըստ քիմիական կազմի՝ հանքային ջուրը հիդրոկարբոնատ-նատրիումային է:

Թիվ 8/69 հորատանցքով կտրվել են երկու ջրատար հորիզոններ՝ տեղադրված 45.0-65.0մ և 135.0-250.0մ խորությունների վրա: Հանքային ջրի ստատիկ մակարդակը 0.4մ երկրի մակերևույթից բարձր է, ջերմաստիճանը կազմում է 35.50C, ծախսը՝ 1.5 լ/վրկ, հանքայնացումը՝ 6.6գ/լ, լուծված ածխաթթու գազի պարունակությունը՝ 1.1գ/լ, իսկ ազատ գազինը՝ 5.0գ/լ: Ըստ քիմիական կազմի՝ հանքային ջուրը հիդրոկարբոնատ-նատրիումային է:

Ընկերությունը նախատեսում է երկարաձգել Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/67 և 8/69 հորատանցքերի արդյունահանման իրավունքը՝ արդյունաբերական (շշալցման) և ազատ ածխաթթու գազի կորզման նպատակով, 20 տարի ժամկետով:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 268056.0 մ<sup>3</sup>/տարի կամ 8.5 լ/վրկ, որից կորզվող ազատ ածխաթթու գազի ծավալը կազմում է 687484.8 մ<sup>3</sup>/տարի, այդ թվում՝

թիվ 1/67 (2-ԷԿ կրկնորդ) հորատանցքից - 220752.0 մ<sup>3</sup>/տարի կամ 7.0 լ/վրկ հանքային ջուր շշալցման համար, որից կորզվող ազատ ածխաթթու գազի ծավալը կազմում է 507729.6 մ<sup>3</sup>/տարի,

թիվ 8/69 հորատանցքից – 47304.0 մ<sup>3</sup>/տարի կամ 1.5 լ/վրկ հանքային ջուր ածխաթթու գազի կորզման համար, որից կորզվող ազատ ածխաթթու գազի ծավալը կազմում է 179755.2 մ<sup>3</sup>/տարի:

#### 4. ՌՌՌ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՇՇԱԼՑՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

##### /ԱՐՏԱՊՐԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ/

Գործարանի տարածքում են գտնվում վարչատնտեսական և արտադրական մասնաշենքերը, օժանդակ և պահեստային տնտեսությունները: Արտադրական մասնաշենքը երկհարկանի շինություն է, ընդհանուր 8389.1մ<sup>2</sup> տարածքով: Արտադրական մասնաշենքը ջեռուցվում է ինչպես կաթսայով (MD 150) այնպես էլ անհատական գազով աշխատող թվով 5 վառարաններով: Լուսավորված է լեդ լուսատուներով, առկա է ջուր: Արտադրական մասնաշենքի 1-ին հարկը բաղկացած է հետևյալ տարածքներից /տեղամասերից/.

1. **1-ին արտադրամաս**- ապակի շշերով արտադրություն,
2. **2-րդ արտադրամաս**- աղբյուրի ջրի և լիմոնադի պլաստիկ շշերով արտադրություն:  
Տեղադրված են 4 հոսքագծեր,
3. **3-րդ արտադրամաս**- հանքային և աղբյուրի ջրի պլաստիկ շշերով արտադրություն,
4. **Ածխաթթու գազի տեղամաս**,
5. **Օշարակի տեղամաս**: Կատարվում է օշարակի պատրաստումը,
6. **Աղբյուրի ջրի մշակման տեղամաս**,
7. **Աղբյուրի ֆիլտրացված ջրի կուտակման տեղամաս**,
8. **Պատրաստի արտադրանքի պահեստ**: Պահպանվում է ընկերության արտադրանքը:  
Տարողունակությունը մինչև 3000 պալետ: Ունի մուտք բոլոր արտադրամասերից,
9. **Դատարկ տարայի պահեստ**: Պահպանվում են ընկերության շշերը և արկղերը: Ունի բարձման 1 դարպաս: Ունի մուտք դեպի 1-ին և 3-րդ արտադրամաս:  
Տարողունակությունը մինչև 900 պալետ,
10. **Պահեստ**: Նախատեսված է ընկերության լաբորատորիայի համար անհրաժեշտ նյութերը պահպանելու համար:

11. **Պահեստամասերի պահեստներ:** Կան 2 պահեստներ, որտեղ պահպանվում են մեքենասարքավորումների պահեստամասերը, շինարարական և տնտեսական նյութեր,
12. **Լաբորատորիա ֆիզիկաքիմիական:** Իրականացվում են արտադրանքի լաբորատոր չափումներ և թեստեր,
13. **Մեխանիկական արտադրամաս:** Իրականացվում են մեքենասարքավորումների և մոնտաժային աշխատանքների գործընթացներ,
14. **Կոմպրեսորային տեղամաս:** Առկա են 5 տարբեր սենյակներում բաշխված կոմպրեսորներ,
15. **Հանքային ջրի ֆիլտրացման տեղամաս:** Իրականացվում է հանքային ջրի ֆիլտրացիան,
16. **Էլեկտրական ենթակայան:**

Արտադրական մասնաշենքի 2-րդ հարկում իրականացվում են հանքային ջրի ընդունման և կուտակման գործընթացները: Առկա են 11 հատ 50մ<sup>3</sup> կուտակիչ տարաներ:

ՌՌՌ Հանքային Ջրերի Գործարան ՓԲԸ-ի վարչատնտեսական մասնաշենքը բաղկացած է 2 հարկից և նկուղային հարկից:

Նկուղային հարկն ունի մուտք աստիճաններով առաջին հարկից և ելք դեպի գործարանի բակ: Նկուղային հարկում են գտնվում 8 սենյակներ, ինչպես նաև վարչատնտեսական մասնաշենքի ջեռուցման համար նախատեսված KD 140 կաթսան: Առաջին հարկում է գտնվում գործարանի գլխավոր մուտքը, անցակետը և մինչև անցակետ 2 սենյակ՝ հավաքարարների և անվտանգության տնօրենի: Անցակետից հետո գտնվում է անվտանգության աշխատակիցների սենյակը: Առաջին հարկում գտնվում է թվով 2 սանհանգույց, ճաշարան, 2 հանդերձարան, էլեկտրիկների համար նախատեսված արհեստանոց, 1 սենյակ անվտանգության աշխատակիցների համար, ինչպես նաև 1 դատարկ սենյակ: Առաջին հարկը ջեռուցվում է և լուսավորված է լեդ լուսատուներով:

Մասնաշենքի 2-րդ հարկն ունի 2 մուտք աստիճաններով առաջի հարկից: 2-րդ հարկում են գտնվում հաշվապահության, գլխավոր հաշվապահի, արտադրության տնօրենի,

գլխավոր էներգետիկի, տեխնիկական բաժնի, արտահանման և արտադրության տնօրենի օգնականի, արխիվի, մատակարարման բաժնի սենյակները: Այստեղ են գտնվում նաև գլխավոր տնօրենի սենյակը, ընդունարանը, ժողովների սենյակը, միկրոբիոլոգիական լաբորատորիան, որակի և սննդամթերքի անվտանգության ղեկավարի սենյակները և 2 սանհանգույց: 2-րդ հարկը լուսավորված է լեդ լուսատուներով, ջեռուցվում է MD 140 կաթսայով:

Արտադրական մասնաշենքի N4-ում է գտնվում գործարանի հումքի և նյութերի պահեստը: Այն մեկ հարկանի շինություն է, 2 մուտքով: Այստեղ են պահպանվում պրեֆորմաները, ալյումինե և պոլիէթիլեն խցանները, պիտակները, ձգվող և փաթեթավորման թաղանթները, ստվարաթղթե նյութերը: Պահեստի ներսում կա առանձնացված տարածք, որտեղ պահպանվում են խտանյութերը և շաքարը: Պահեստը ջեռուցվում է 2 հատ Combat մակնիշի բնական գազով աշխատող անհատական վառարաններով: Լուսավորվում է լեդ լուսատուներով:

Թվարկված բոլոր շինությունները, ենթակառուցվածքները, հոսքազծերը գոյություն ունեցող են, որոնց հզորությունը թույլ է տալիս 7.0լ/վրկ հանքային ջուր արդյունահանելու թույլտվություն ստանալու դեպքում շշալցնել ողջ հզորությամբ:

Հանքային ջուրը պլաստիկ շշերով՝ 0,33լ, 0,5լ, 1լ, և 1,5լ տարողությամբ շշալցվում է KHS ընկերության արտադրության 17600.0 շիշ/ժամ արտադրողականությամբ PET նոր հոսքազծով, իսկ ապակե շշերով՝ 0,33լ և 0,5լ տարողությամբ 12000.0 շիշ/ժամ արտադրողականությամբ հոսքազծով:

Գործարանում շշալցվում է նաև «Նոյ» և «Արագած» բնական աղբյուրի խմելու ջուր պլաստիկ շշերով, որը շշալցվում է «Ալափարս» բնական աղբյուրից՝ համաձայն լիազոր մարմնի կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվության: Մաքուր ջրի շշալցման համար տեղադրված են 3 հոսքազծեր:

Աղբյուրի ջուրը կարող է շշալցվել ինչպես հանքային ջրի համար նախատեսված 2 հոսքազծերով, այնպես էլ մյուս 3 հոսքազծերով՝ 5լ, 6լ և 10լ տարողությամբ ՊԷՏՖ տարաներում, 5լ և 6լ տարողությունների շշալցման դեպքում հոսքազծի հզորությունը

կազմում է 300շիշ/ժ, 10լ-ի դեպքում՝ 180-200շիշ ժամում: 19լ պոլիկարբոնատային տարաներում՝ 150շիշ/ժ արտադրողականությամբ և 0,5լ պլաստիկ տարաներում՝ 3500շիշ/ժ արտադրողականությամբ:

Աղբյուրի ջուրը կապտաժից ինքնահոս լցվում է պոմպակայանի ջրընդունիչ ավազան, որտեղից պոմպի (չժանգոտվող պողպատից պատրաստված) միջոցով 1,2կմ երկարությամբ խողովակազծով մղվում գործարան:

Գործարանում արտադրվում է նաև «Նոյ» և «Արագած» լիմոնադներ, որի համար տեղադրված 3000լ/ժամ արտադրողականությամբ հոսքազծով այն շշալցվում է պլաստիկ 1լ-ոց շշերով:

#### **4,1 ՀՈՍՔԱԳԾԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ**

##### **Պլաստիկ շշերի հոսքազծի տեխնոլոգիական նկարագիրը**

Պլաստիկ շշերով հանքային ջրի շշալցումը կատարվում է KHS մակնիշի 17600.0 շիշ ժամ արտադրողականությամբ ավտոմատ կառավարվող հոսքազծով՝ 0,33լ, 0,5լ, 1լ և 1,5լ շշերով: Շշալցման գործընթացը կատարվում է հետևյալ հերթականությամբ:

1. Պրեֆորմաների բեռնում դեպի շշափչման համակարգ Boxtipper Blomax սարքավորման միջոցով
2. Պրեֆորմաների տաքացում, ֆորմաների հովացում և շշափչումը կատարվում է 17600 շիշ/ժամ արտադրողականությամբ Innopet Blomax 8 SBL գերմանական շշափչման մեքենայով
3. Արտադրանքի գազավորումը իրականացվում է Innopro Paramix C/19/T30-10 մակնիշի մեքենայով:
4. Փակ համակարգով շշերը տեղափոխվում են Innofill DRV PET 60/15SV մակնիշի գերմանական 17600շիշ/ժամ շշալցնող մեքենա այնտեղ շշալցվում և խցանավորվում են
5. Շշալցված և խցանավորված արտադրանքը ավտոմատ հոսքազծերի միջոցով տեղափոխվում են հաջորդ ցիկլ, որտեղ իրականացվում է կողավորում,

ժամկետավորում բրիտական LYNX լազերային կողավորող մեքենայով, ինչպես նաև գերմանական GTS ստուգման մեքենայի միջոցով ստուգվում է լցվածությունը և խցանի առկայությունը:

6. Արտադրանքի պիտակավորումն իրականացվում է գերմանական 21000.0 շիշ/ժամ արագությամբ KHS Innoket NEO 1RF մակնիշի մեքենայով:

7. Փաթեթավորումն իրականացվում է ավտոմատ DIMAC Goldstar իտալական մեքենայով

8. Պալետավորումն իրականացվում է իտալական ավտոմատ DUETTI մեքենայով;

### **Ապակի շշերի հոսքագծի տեխնոլոգիական նկարագիրը**

Ապակյա շշերով շշալցումը կատարվում է ընկերության ինժեներական լուծումներով տրված տարբեր երկրների մեքենասարքավորումներով: Գծի արտադրողականություն 12000.0 շիշ/ժամ է 0.5 և 0.33 լիտրերով տարաներով:

1. Դատարկ շշերի լվացումը կատարվում է Ֆրանսիական SIDEL Aqua SLZQ .0012 16000 շիշ/ժամ արտադրողականությամբ մեքենայով:

2. Թե դատարկ, թե լիքը շշերի տեղափոխումն իրականացվում է մոլդովական BERTHOLD ընկերության հոսքագծերով:

3. Դատարկ շշերի ցայումն իրականացվում է իտալական PROCOMAC 17000 շիշ/ժամ արտադրողականությամբ մեքենայով

4. Շշալցումը և խցանավորումն իրականացվում է Գերմանական KHS մեքենայով 18000.0 շիշ/ժամ մեքենայով:

5. Արտադրանքի կողավորման համար տեղադրված է ամերիկյան Videojet 1210 մակնիշի մեքենան

6. Լիքը շշերի խոտանավորման գործընթացն իրականացվում է Ռուսական Борман 2 հատ մեքենաներով ամեն մեկը 6000.0 շիշ/ժամ արտադրողականությամբ

7. Պիտակավորման համար տեղադրված են ևս 2 մեքենա գերմանական Gernep և իտալական PE Universal գումարային 12000.0 շիշ/ժամ արտադրողականությամբ

8. Փաթեթավորման համար տեղադրված է Ռուսական Бормаш մեքենա: Փաթեթավորման 2 տեսակ է առկա՝ արկղերով և ստվարաթղթե տակդիրով և պոլիէթիլենային թաղանթով: Նշված մեքենան միայն աշխատում է ստվարաթղթե տակդիրով և պոլիէթիլենային թաղանթով արտադրության դեպքում: Գոյություն ունի նաև մեկ կիսաավտոմատ ստվարաթղթե տակդիրով և պոլիէթիլենային թաղանթով աշխատող մեքենա:

#### **4.2 ՌՌՌ հանքային ջրերի գործարանի ջրամատակարարման և ջրահեռացման բնութագիրը**

##### **Ջրամատակարարման համակարգեր**

Ընկերությունը 10.0լ/վրկ թողունակությամբ ջուրը վերցնում է Ալափարսից՝ համաձայն լիազոր մարմից ստացված նոր ջրօգտագործման թույլտվության՝ 10,04,2018թ. N 000098: Աղբյուրի ջուրը օգտագործվելու է արդյունաբերական շշալցման գործընթացում:

Աղբյուրի ջրի հաշվարկային ծախսերը կազմում են համապատասխանաբար՝ տարեկան՝ 259160 մ<sup>3</sup>, առավելագույն օրական՝ 864,0 մ<sup>3</sup>, առավելագույն վայրկենական՝ 10.0 Լ:

Լաբորատորիայի և գործարանում աշխատողների տնտեսակենցաղային կարիքներն ապահովվելու են Ալափարս գյուղի խմելու ջրամատակարարման ցանցից:

##### **Ջրահեռացման ցանցեր և կառույցներ**

Շշալցման գործարանի գործունեության ընթացում գոյացած կոմունալ-կենցաղային կեղտաջրերն ուղղվում են դեպի Չարենցավան-Երևան կոյուղու կոլեկտոր:

### **4,3 Առաջացող թափոնների բնութագիրը**

Արտադրական ողջ գործընթացում գործարանում առաջանում են թափոններ, որոնց կառավարումն իրականացվում է համաձայն լիազոր մարմնի կողմից ստացված թույլտվությունների:

#### **Աղտոտված ապակու ջարդոն**

Թափոնը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 3140081601004 (ապակե տարաներ):

Տարեկան առաջանում է 80,0 տ թափոն, որը տեղափոխվում է Ա/Չ Սամվել Թադևոսյանի կողմից Չարենցավանի աղբավայր՝ համաձայն պայմանագրի:

#### **Բանեցված օդաճնշիչ դողեր**

Բանեցված օդաճնշիչ դողերի թափոններին պատկանում են՝ անվադողերը: Թափոնի քանակը կկազմի 20,0 տ/տարի:

Կազմակերպությունների գործունեությունից առաջացած Բանեցված օդաճնշիչ դողերի թափոնները պատկանում են վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 5750020013004, որոնք փոխարինվում են նորերով կամ հանձնվում են ավտոտեխսպասարկան կետերին:

#### **Յուղոտված լաթեր**

Յուղոտված լաթեր թափոններին պատկանում են՝ բրդյա, բամբակյա և այլ գործվածքներից մաքրող լաթեր, յուղեր: Թափոնի քանակը կկազմի 0,04 տ/տարի:

Կազմակերպությունների գործունեությունից առաջացած յուղոտված լաթեր թափոնները պատկանում են վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 5820060001 01 4, որը տեղափոխվում է Ա/Չ Սամվել Թադևոսյանի կողմից Չարենցավանի աղբավայր՝ համաձայն պայմանագրի:

#### **Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան**

Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան թափոններին պատկանում են՝ սնդիկային լամպեր ՊՎ-20,40: Թափոնի քանակը կկազմի 0,06 տ/տարի:

Կազմակերպությունների գործունեությունից առաջացած բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան



Թափոնները պատկանում են վտանգավորության 1-ին դասին, ծածկագիր՝ 35330100 13 01 1: այս թափոնները կուտակվում են առանթին պահեստում:

**Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)**

Պինդ կենցաղային թափոններին պատկանում են՝ թուղթը, ստվարաթուղթը, պոլիէթիլենային տոպրակներ, ապակի, ռետինե ձեռնոցներ, մետաղական տարաներ: Թափոնի քանակը կկազմի 70,0 տ/տարի:

Կազմակերպությունների գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4:

Պինդ կենցաղային թափոնները կուտակվում են տարածքում առկա աղբամանների մեջ, որտեղից էլ տեղափոխվում է Ա/Ձ Սամվել Թադևոսյանի կողմից Չարենցավանի աղբավայր՝ համաձայն պայմանագրի

**Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ**

Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ թափոններին պատկանում են՝ կոմպրեսորային յուղերը: Թափոնի քանակը կկազմի 3,5տ/տարի:

Կազմակերպությունների գործունեությունից առաջացած իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ թափոնները պատկանում են վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիր՝ 5410030202033, որոնք օգտագործվում են սեփական կարիքների համար՝ մասնավորապես սարքավորումների յուղման համար:

**Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ**

Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ թափոններին պատկանում են՝ ավտոմոբիլային յուղերը: Թափոնի քանակը կկազմի 3,0տ/տարի:

Կազմակերպությունների գործունեությունից առաջացած թափոնները պատկանում են վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիր՝ 5410030202033 որոնք հանձնվում են ավտոտեխսպասարկյան կետերին:

**Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան**

Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան պարունակող խողովակներ և խոտան թափոններին պատկանում են՝ կապարե կուտակիչները: Թափոնի քանակը կկազմի 1,0տ/տարի:

Կազմակերպությունների գործունեությունից առաջացած Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան թափոնները պատկանում են վտանգավորության 2-րդ դասին, ծածկագիր՝ 921 1010013012, որոնք հանձնվում են ավտոտեխսպասարկան կետերին:

**Կարծրացած տարասեռ պլաստմասսաների խառնուրդներ թափոններ**

Թափոնը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 5710990001004 (պլաստմասսաների հումք, փաթեթավորում և մնացորդներ):

Տարեկան առաջանում է 6,0տ թափոն, որը տեղափոխվում է Ա/Ձ Սամվել Թադևոսյանի կողմից Չարենցավանի աղբավայր՝ համաձայն պայմանագրի:

**Զտիչ գործվածքների և պարկեր՝ /վնասակար/ անօրգանական աղտոտվածությամբ**

Թափոններին պատկանում են՝ արտադրական գտիչները /ֆիլտրերը/: Թափոնի քանակը կկազմի 3,5տ/տարի:

Կազմակերպությունների գործունեությունից առաջացած թափոնները պատկանում են վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիր՝ 5410030202033, որը տեղափոխվում է Ա/Ձ Սամվել Թադևոսյանի կողմից Չարենցավանի աղբավայր՝ համաձայն պայմանագրի:

Ձեռնարկության գործունեության արդյունքում առաջացող թափոնների ցանկը և քանակները բերված են աղյուսակ 5.1-ում:

Աղյուսակ 5.1

N	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը (Թափոնների ցանկի)	Չափման միավորը	Քանակը կամ ծավալը
1	Աղտոտված ապակու ջարդոն	IV	3140081601004	տ/տարի	80,0
2	Բանեցված օդաճնշիչ դողեր	IV	5750020013004	տ/տարի	20
3	Յուղոտված լաթեր	IV	5820060001 01 4	տ/տարի	0.04
4	Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան	I	35330100 13 01 1	տ/տարի	0,06
5	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	91200400 01 00 4	տ/տարի	70,0

6	Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ	III	5410030202033	տ/տարի	3,5
7	Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ	III	5410030202033	տ/տարի	3,0
8	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	II	921 1010013012	տ/տարի	1,0
9	Կարծրացած տարասեռ պլաստմասսաների խառտուրդներ թափոններ	IV	5710990001004	տ/տարի	6,0
10	Զտիչ գործվածքների և պարկեր՝ /վնասակար/ անօրգանական աղտոտվածությամբ	III	58200200 01 01 3	տ/տարի	3,5
	<b>Ընդամենը</b>			տ/տարի	<b>187,1</b>

**5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Շրջակա միջավայրը դա մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և ազդեցության գնահատման կարիք ունի:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնական խնդիրներն են շրջակա միջավայրի բնական վիճակի պահպանումը, վերականգնումը, վնասագերծումը, բնական պաշարների խելամիտ օգտագործումը, շրջակա միջավայրի վրա ֆիզիկաքիմիական, կենսաբանական, մեխանիկական, ռադիոակտիվ և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումն ու կանխումը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը դա շրջակա միջավայրի վրա բնածին և մարդահարույց ներգործության էկոլոգիական հետևանքների վերլուծություն է՝ շրջակա միջավայրի որակի պահպանման և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովման նպատակով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դեպքում իրականացվում է մթնոլորտային օդ և մակերևութային ջրերի մեջ արտանետվող աղտոտող նյութերի քանակի և բաղադրության մշտական հաշվառում և չափումներ, մշակվում են դրանց կրճատման և կանխման միջոցառումներ: Շրջակա միջավայրի վիճակի գնահատման համար սահմանվում են աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցետրացիաներ, սահմանային թույլատրելի արտանետումներ և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվներ:

Մարդն իր արտադրական գործունեությամբ մշտապես ազդում է շրջապատող բնության վրա: Այդ ազդեցության հետևանքով բնական միջավայրը կարող է բարելավվել (ծառատնկում, ոռոգում և այլն), դառնալ ավելի բարենպաստ մարդու կյանքի ու գործունեության համար, կամ էլ խաթարվել, քայքայվել:

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում: Առաջին, երբ մարդը բնությունից կորզում է և օգտագործում է նրա տարրերը ոչ այն չափով, որքան կարելի է և ոչ այնտեղ, որտեղ կարելի է: Երկրորդ, երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրական կամ կենցաղային այնպիսի թափոններ և այն քանակով, որ բնությունը չի կարողանում ինքնամաքրվել:

Երկու դեպքերում էլ տեղի է ունենում բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտում, և հասունանում է էկոլոգիական ճգնաժամը, ապա և աղետը:

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի շահագործման բազմամյա փորձը ցույց է տվել, որ արդյունահանման աշխատանքների ընթացքում որևիցե տեխնածին ճնշումներ հանքավայրի շրջակայքի մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվել, քանի որ, հանքային ջրի արդյունահանման ընթացքում փոշու և վնասակար նյութերի արտանետումներ չի կատարվել, իսկ կենցաղային աղբը տեղափոխվել է մոտակա աղբավայրի կետեր:

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրում բացակայում են սողանքային երևույթները, մոտակայքում կան արդյունաբերական, բնակելի և տնտեսական շինություններ:

Ընկերությունն օգտվում է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և կոյուղագծեր, իսկ հանքավայրի շահագործման (շշալցման ու գազի կորզման) համար նոր օժանդակ շինությունների կառուցում չի նախատեսվում:

Բջնիի հանքավայրի ջրհավաք թիվ 2-ԷԿ (1/67-ի կրկնորդ) և 8/69 հորատանցքերի շահագործումը ընկերությունը մինչ օրս իրականացնում է համաձայն ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշմանը, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

Ընկերությունը հանքային ջրից շշալցման գործընթացը կշարունակի իրականացնել Չարենցավան քաղաքում գտնվող հանքային ջրերի գործարանում, իսկ ազատ ածխաթթու գազի կորզման գործընթացը՝ Բջնի գյուղի վարչական տարածքում գտնվող ազատ ածխաթթու գազի կորզման արտադրամասում, որոնք հազեցած են անհրաժեշտ տեխնոլոգիաներով և սարքավորումներով:

Հանքավայրի արդյունավետ շահագործման և արտադրության կազմակերպման համար ընկերությունը համալրված է բազմափորձ մասնագետներով:

Հանքային ջրերի հանքավայրերի շահագործման բազմամյա փորձը գալիս հավաստելու, որ ջրհավաք հորատանցքերի շահագործման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլինի գրեթե զրոյական:

## **6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

## 6.1. Ընդհանուր բնույթի միջոցառումներ

Մարդկային արտադրական գործունեությունը միաժամանակ լուրջ վտանգ կարող է սպառնալ շրջապատող միջավայրին, եթե այն իրականացվի առանց հաշվի առնելու ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջապատող միջավայրի պահպանության պայմանները:

Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (հոդված 64), ընդերք շահագործողները պարտավոր են ապահովել շրջակա միջավայրի պահպանության պայմաններն ու պահանջները, իրականացնելով հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը,
- բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի պահպանումը,
- ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ծառատնկման, կանաչապատման աշխատանքների իրականացումը, մշակված հանքային տարածությունների վերականգնումը,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթարկված փաստաթղթերի պահանջների ու միջոցառումների կատարումը,
- շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովումը և այլն:.

Ջրհավաք հորատանցքերի շահագործման աշխատանքները կիրականացվեն՝ հաշվի առնելով ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտների ՀՀ օրենսդրության պահանջները, որոնք ներառում են հետևյալ հիմնական միջոցառումները.

- պահպանել աշխատանքների կատարման համար հողահատկացման սահմանված կարգը,
- բնական պայմանների խախտման բացասական երևույթների վերացում,
- բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և շրջակա միջավայրի պահպանման համար առանցքային միջոցառումների ձեռնարկումը,
- աշխատանքների վարման անվտանգ ձևերի ընտրություն և այլն:

Ստորերկրյա ջրերի (քաղցրահամ և հանքային) հանքավայրերի շահագործման երկարամյա փորձը գալիս է հավաստելու, որ դրանց պաշարների արդյունաբերական յուրացումն բացասական ազդեցություն չի թողնում շրջակա միջավայրի վրա:

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում Բջնի գյուղի տարածքում, բնակելի շենքերի հարևանությամբ, հանքավայրի տեղամասում չկան անտառային ծածկույթներ, բացակայում են սողանքային երևույթները և այլն:

Հանքավայրի հիպոտեոտրիկ բացարձակ նիշերը տատանվում են 1480.0-1505.0մ սահմաններում:

Հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր:

Աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլիմի աննշան և չի հանգեցնի էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը:

## **6.2. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիր**

Ջրհավաք հորատանցքի արդյունավետ շահագործման հիմնական պահանջները հետևյալն են՝

1. Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտիի առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:



2. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը պետք է իրականացնել հատուկ ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով: Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող ջրհավաք հորատանցքից ՊՊՀ-ի կողմից հաստատված պաշարների չափից ավելի արդյունահանումը:
3. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքի շահագործումը պետք է իրականացվի հիդրոտերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:
4. Իրականացնել սիստեմատիկ հիդրոտերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիտորինգ) ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ: Ջրհավաք հորատանցքի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ ներառում է հանքային ջրերի քանակի և որակի նկարագիրը, նրա երկարատև շահագործման պայմաններում, ինչպես նաև հորատանցքի պահպանումը՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից:
5. Հանքային ջրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ է ապահովել ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:
6. Հակավթարային միջոցառումներ:
7. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումներ:
8. Նախատեսված արդի սարքավորումների տեղադրման շնորհիվ ջրի խնայողություն՝ կբացառվի շաղկապման ընթացքում ջրի վերաթափումը և կորուստը:
9. Շշերի խցափչման ինովացիոն մեքենան կահավորված է սանիտար մշակման ուլտրամանուշակագույն լամպերով և բարձր ճնշման օդի լրացուցիչ գտման համակարգով, ինչը թույլ կտա վերացնել նոր շշերի ողողման

անհրաժեշտությունը և կբերի ջրի ծախսի կրճատմանը:

10. Ներդրված է բարձր ճնշման կոմպրեսորի հովացման լրիվ շրջանառու համակարգ, ինչը թույլ է տալիս կրճատել թարմ ջրի ծախսը և նվազեցնում է հոսքաջրերի արտահոսքը բաց:
11. PET շշերի խցափակման ռոտացիոն մեքենան կահավորված է փոշու ասպիրացիայի համակարգով, ստերիլ օդի HEPA գտիչներով՝ օդի մաքրության դասը համապատասխանում է ISO7 («մաքուր սենյակ»), ինչը թույլ է տալիս խուսափել օդի աղտոտվածությունից:
12. PET շշերի խցափչման մեքենայի ընտրված մոդելը տեղադրված է աղմկապաշտպանված պատյանում, ինչը զգալի նվազեցնում է աղմուկի մակարդակը:
13. Գործարանի տարածքում նախատեսված է կանաչ գոտի:
14. Չոր և շոգ եղանակներին բաց հրապարակներում և մերձակա ճանապարհներին կատարվելու է ջրցանում՝ փոշենստեցման նպատակով:
15. Նախատեսվում է հարակից տարածքները չխախտել և չաղտոտել կենցաղայի աղբով և այլ տեսակի թափոններով:
16. Իրականացնել թափոնների կառավարումը՝ համաձայն լիազոր մարմնի կողմից հաստատված նախագծի:

Ելնելով այն հանգամանքից, որ ընկերության կողմից շահագործվող հորատանցքը արդեն իսկ կահավորված է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և խողովակաշարը կառուցված է, իսկ հանքային ջրերի գործարանը գոյություն ունեցող է՝ կահավորված համապատասխան սարքավորումներով, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման անհրաժեշտություն չկա, ուստի կարելի է փաստել, որ արտադրողականության ընդլայնման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու կամ նվազեցնելու համար լրացուցիչ միջոցառումների նախատեսում չի պահանջվում:

### 6.3. Հիդրոերկրաբանական մշտադիտարկումների (մոնիտորինգի)

#### իրականացման պլան

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում պահանջում են զուգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ուսումնասիրություններ, որը կապահովի գերծ պահել ջրերը աղտոտումից, սպառումից և տեխնածին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ նախատեսվող և իրականացվող ռեժիմային դիտարկումների նպատակն է՝

- 1) հանքավայրի շահագործման ժամանակ հանքային ջրի քանակի և որակի կայունության պահպանումը.
- 2) հնարավոր սպառման և աղտոտման բացահայտումն ու նախազգուշացումը.
- 3) ստորերկրյա հանքային ջրերի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը.
- 4) ստորերկրյա հանքային ջրերի ռեժիմի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.
- 5) ստորերկրյա հանքային ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը.
- 6) ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերում ջրի ծախսի, ճնշման կամ մակարդակի և ջերմաստիճանի չափումների, ինչպես նաև ֆիզիկաքիմիական անալիզների իրականացումը, ստորերկրյա ջրերի պաշարների վերագնահատման օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը.
- 7) ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցումը,  
անվերադարձ ազդեցության կանխարգելումը,
- 8) ամփոփ տվյալների հիման վրա առաջարկությունների մշակումը և ներկայացումը լիազոր մարմնին:

Ելնելով վերոհիշյալից, հանքավայրի թիվ 2-ԷԿ (1/67-ի կրկնորդ) և 8/69 հորատանցքերում և շշալցման գործարանի տարածքում համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. N 1484-Ն և 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշումների հավելվածի, սահմանված կարգով, կիրականացվեն մշտադիտարկումներ (մոնիտորինգ)՝ ջրի և գազի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ, ինչպես նաև կկատարվեն մթնոլորտային օդի և հողային ծածկույթի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար (տե՛ս մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակության աղյուսակը):

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Հանքային ջուր	հանքավայրի առաջին (խիստ ուժեղ) սանիտարական պահպանության գոտում ընդգրկված թիվ 2-ԷԿ և 8/69 հորատանցքեր	- ջրերի քիմի-ական կազմ,  - մակարդակ, ջերմաստիճան, ջրի և գազի ծախս	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, - չափումներ	- եռամսյակը մեկ անգամ  - 10 օրը մեկ անգամ
Հողային ծածկույթ	հանքավայրի և շշալցման գործարանի տարածքում	- հողերի քիմի-ական կազմ, - հողերում նավթամթերքների պարունակությունը	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	- տարեկան երկու անգամ
Մթնոլորտային օդ	շշալցման գործարանի տարածքում	- օդի աղտոտում փոշիով և արտանետում-ներով	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	- տարեկան մեկ անգամ
Կենսաբազմաանության ուսումնասիրություն	Հորատանցքի տարածքում	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	- տարեկան մեկ անգամ

Ելնելով հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններից և գործող մեթոդական ցուցումներից՝ ջրի ծախսի և գազի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումները կկատարվեն 10 օրը մեկ:

Ջրի նմուշները քիմիական լաբորատորիայում ենթարկվելու են կրճատ քիմիական անալիզի, որտեղ որոշվելու են – (Na+K), NH<sub>4</sub>, Ca, Mg, Fe, Cl, SO<sub>4</sub>, NO<sub>2</sub>, NO<sub>3</sub>, CO<sub>3</sub>, HCO<sub>3</sub>, SiO<sub>2</sub>, H<sub>2</sub>S, կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները և այլն:

Ստացված արդյունքները հնարավորություն կնձեռնեն գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները:

Արդյունքում կկազմվի հաշվետվություն, որը կներկայացվի «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ն հաշվառման և պահպանման:

Եթե հաստատված պաշարների և մոնիտորինգի արդյունքում ստացված տվյալների միջև նկատվի զգալի տարբերություն, ապա համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. 1480–Ն որոշման պահանջների, անհրաժեշտ կլինի վերագնահատել հանքային ջրի հանքավայրի պաշարները և ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի ընդերքի վարչության ընդերքաբանական և նախագծերի տեխնոլոգիական փորձաքննության բաժին օգտական հանաժոնների պաշարների (ՕՀՊ) հանձնաժողովի հաստատմանը:

#### **6.4. Սանիտարական պահպանության գոտի**

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում: Նախկինում հորատանցքը կահավորված է եղել չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով:

Ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ պետք է ներառի հանքավայրի վիճակի նկարագիրը՝ հանքավայրի պաշտպանումն աղտոտումից, սպառումից:

Համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 67-ի ստորերկրյա ջրերի հանքավայրերի շուրջը սահմանվում են սանիտարական պահպանության գոտիներ

Ածխաթթվային հանքային ջրի բարվոք մանրէաբանական կազմը, շրջապատող միջավայրը, հնարավոր աղտոտող օբյեկտների բացակայությունը սնման և բեռնաթափման մարզերում և ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը՝ բարենպաստ պայմաններ են ստեղծում երկրորդ (սահմանափակման գոտու) և երրորդ սանիտարական պահպանության գոտիների անտեսման և միայն առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու կառուցման անհրաժեշտության մասին:

Վերջինս կոչված է հանքային ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունների պահպանման, հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին ընդգրկում է բոլոր այն հորատանցքերը, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործողական պաշարները:

Նկատի ունենալով ջրհավաք թիվ 2-ԷԿ (1/67-ի կրկնորդ) և 8/69 հորատանցքերի երկրաբանական կտրվածքը, ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը և ջրի ճնշումային բնույթը, այն գտնվում է բարենպաստ սանիտարահիգիենիկ և հիդրոերկրաբանական պայմաններում, որտեղ բացառվում է ստորերկրյա ջրերի աղտոտումը:

Ջրհավաք թիվ 2-ԷԿ (1/67-ի կրկնորդ) և 8/69 հորատանցքերը իրենց գլխամասային սարքավորումներով ներառված են առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտիում: Գոտիները պարսպատված են ցանկապատով և ապահովված պահպանությունով:

Հաշվի առնելով ջրհավաք հորատանցքերի տեղամասի պայմանները (հորատանցքերը գտնվում են Բջնի գյուղի բնակելի շենքերի մոտակայքում, Բջնի-

Հրագրան ճանապարհից ձախ կողմում, 10.0-15.0 մ հեռավորության վրա) կառուցված թիվ 2-ԷԿ (1/67-ի կրկնորդ) և 8/69 հորատանցքերի համար առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու մակերեսը սահմանվել է համապատասխանաբար՝ 1521.0 մ<sup>2</sup> /որից 341,9 մ<sup>2</sup> շինություններ/ և 76.0մ<sup>2</sup>:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքը անմիջապես հորատանցքերի մոտ պլանավորված է այնպես, որպեսզի հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել հորատանցքերի սահմաններից դուրս:

Առաջին սանիտարական պահպանության գոտու տարածքում արգելվում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքներ, որոնք չունեն անմիջական կապ հորատանցքի շահագործման, վեռակառուցման/վերանորոգման և սպասարկման հետ:

Ընդերքօգտագործողը/ջրօգտագործողը սանիտարական պահպանության գոտու սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք: Կողմնակի մարդկանց մուտքը, որոնք կապ չունեն հանքավայրի հորատանցքի շահագործման և պահպանության հետ խստիվ արգելվում է:

Արգելվում է յուրաքանչյուր գործունեություն այլ անձի կողմից: Այն կարող է իրականացվել միայն ընդերքօգտագործողի/ջրօգտագործողի համաձայնությամբ:

МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ  
АРМЯНСКОЙ ССР

Республиканский научно-исследовательский институт  
курортологии и физиотерапии им. профессора

А. А. А к о н я н а

Ереван, ул. Абовяна 54

Тел. 2-17-45, 2-19-95

№ 0-30

№ 4 " декабря 1970г.


С П Р А В К А  
о кондициях на Бжнинские минеральные  
воды Армянской С С Р

Бжнинские минеральные воды являются холодными (16-22°) и термальными (34 - 39°), углекислыми, гидрокарбонатными натриевыми (НСО<sub>3</sub> - 71-77 экв./%, Na - 77-81 экв./%) с повышенным содержанием хлора (19-22 экв./%), кремнистыми (Н<sub>2</sub>SiO<sub>3</sub> - 109-180 мг/л), средней минерализации (4,2 - 6,5 г/л), слабокислыми (РН - 6,5-6,6).

Бжнинские воды характеризуются высоким газосодержанием на глубине (СО<sub>2</sub> - 4,5-6,4 г/л). Однако, при выходе на поверхность, вследствие высокой температуры большая часть СО<sub>2</sub> выделяется из воды в виде спонтанного газа, а в растворенном состоянии сохраняется только (в зависимости от температуры) от 1,1 до 1,8 г/л.

Бжнинские воды по своим характерным особенностям близки к воде курорта Вийи (Франция) и могут применяться в лечебно-курортных целях, как для розлива, так и для приема на месте.

Директор института



доктор мед. наук  
профессор

У. И. Агаджанян

рук. отд. изуч. курорт.

/подпись/

док. мед. наук /  
С. С. Топчян




# ԻՐԱՎԻ ՃԱԿ ԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻՄ

ՀՀ Կոտայքի մարզի Բջնի ածխաթվալին հանքային  
ջրի հանքավայրի թիվ 8/69 և 2 - Է4 (1/67-ի կրկնորդ) հորատանցքերի  
(հատված K-38-126-V թերթից)  
Մասշտաբ 1:50000

Հորատանցքերի կոորդինատներն են՝

- |   |  |
|---|--|
| I. CK-42 կոորդինատների համակարգով           | Հորատանցքերի բացարձակ բարձրությունները |
| Հոր. 8/69      x= 4480713    y=8470544      | Հոր. 8/69      - 1488,7մ               |
| Հոր. 2-Է4 /1/67/    x= 4480755    y=8470942 | Հոր. 2-Է4/1/67/    - 1494,6մ           |
| II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով     |  |
| Հոր. 8/69      x= 4480705    y=8470542      |  |
| Հոր. 2-Է4 /1/67/    x= 4480748    y=8470840 |  |



«ՈՈՈ հանքային ջրերի գործարան» ՓԲԸ  
գլխավոր տնօրեն

ժ. Սարգսյան

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐԿԱԾ Է

Սեփականության

ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

(սեփականության կամ օգտագործման)  
«ՈՌՈ» ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ

(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))



Կոտայքի մարզ ք. Չարենցավան Գործարանային փողոց 10

(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)  
արտադրական օբյեկտի

ՆԿԱՏԱՄԲ

ՀՀ Կենտրոն մ/տ նոտարի կողմից վավերացված 25.12.2009թ. ս/մ 4101

(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

առուվաճառքի պայմանագրի և 20.01.2010թ ս/մ 103 առուվաճառքի ՀԻՄԱՆ ՎՐԱ

պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագրի

**ԳՐԱՆՅՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ  
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԲ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՅՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ  
07-007-3-1 ՄԱՏՅԱՆԻ 066 ՀԱՍՏՐԻ ՏԱԿ:**

**ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ. ՄԵԿԸ ՏՐԿՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ  
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՄԸ ՊԱՀՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱՔԱՄԱՆՈՒՄՈՒՄ:**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԵՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱՔԱՄԱՆՄԱՆ**

ՂԵՎԱԿԱՐ

Ե. Գառոյան  
(ստորագրությունը)


հունվարի

20 10 թ.

2527740

## ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1:5000  
(մասշտաբը)



Հատված	Երկարություն (մ)	Սահմանակից հարեան
1 - 2	177.15	Ճանապարհ
2 - 3	432.30	«Միկրոպրոցեսոր» ՓԲԸ
3 - 4	84.25	Չարենցավան համայնք
4 - 5	49.37	Հարությունյան Համետ
5 - 6	102.94	Հարությունյան Համետ
6 - 1	391.88	Ճանապարհ

Շինություն	Անվանում
N 1	վարչատնտեսական մ/շ
N 2	Պահեստ N4
N 3	Պահեստ N1
N 4	Պահեստ N2
N 5	Պահեստ N3
N 6	Ջրահովարան
N 7	Կաթսայատուն
N 8	Արտադրական մ/շ
N 9	Երկաթգիծ
N 10	Հենապատ/պարիսպ
N 11	Ճանապարհ

Կատարող


  
(ստորագրությունը)



# ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻՇԸ

1:200  
(մասշտաբը)

Վարչատնտեսական մասնաշենք



Նկուղ  
D=0.5  
d=0.2  
H=3.60  
h=3.40  
S=715.10

*[Signature]*  
(ստորագրությունը)



### ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ \_\_\_\_\_ 07-007-005-001  
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ \_\_\_\_\_ արդյունաբեր., ընդերքօգտագործ. և այլ արտ. նշան. օբյեկտ  
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ \_\_\_\_\_ արդյունաբերական օբյեկտների  
 ՀՈՂԱՄԱՍԻ ԶԱՓԸ (հա) \_\_\_\_\_ 7.5  
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ \_\_\_\_\_ սեփականության

### ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ \_\_\_\_\_ 07-007-005-001-001  
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ \_\_\_\_\_ արտադրական  
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ \_\_\_\_\_ վարչատնտեսական մասնաշենք  
 ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.) \_\_\_\_\_ 2214.1  
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ \_\_\_\_\_ սեփականության

### ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Հ/Հ	ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵՐԵՍԸ (քառ.մ.)	ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ
1	005-001-002	պահեստ N4	950.4	սեփականության
2	005-001-003	պահեստ N1	161.1	սեփականության
3	005-001-004	պահեստ N2	122.6	սեփականության
4	005-001-005	պահեստ N3	41.1	սեփականության
5	005-001-006	ջրահովարան	34.0	սեփականության
6	005-001-007	կաբսայատուն	250.5	սեփականության
7	005-001-008	արտադրական մասնաշենք	8389.1	սեփականության


**Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ**

8	005-001-009	եռնաթափ	3050.0	սեփականության
9		հենապատ/պարիսպ	70.0	սեփականության
10		ճանապարհ	2114.0	սեփականության

Շենքի և շինությունների ընդհանուր մակերեսը- 17396.9քմ  
 ավարտվածության աստիճանը՝ 80% և ավելի

ներդիր՝ 9/ հնր/ թերթ

*Կատարողներ՝ Գ. Սաֆարյան (ստորագրությունները) 18.02.2010թ*  
*Գ. Շահրազյան*  
*Գ. Հարությունյան*



Կատարողներ՝ *Գ. Սաֆարյան*  
 (ստորագրությունները)  
*Գ. Շահրազյան*  
*Գ. Հարությունյան*